ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1230: **գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Օ, հայրենիք դառն ու անուշ...

Վահան Տերյան

ՇԱԲԱԹ, 21 ԱՊՐԻԼԻ 2018Թ.
№ 10 (468)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Սերժ Սարգսյանն ընտրվեց ՀՀ վարչապետ. կողմ քվեարկեց 77 պատգամավոր

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ազգային ժողովում բաց քվեարկությամբ ՀՀ վարչապետ ընտրվեց Սերժ Սարգսյանը: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ նրա օգտին կողմ քվեարկեց 77 պատգամավոր, դեմ՝ 17:

Նրա թեկնածությունն առաջադրել էր իշխող կոալիցիան՝ ՀՀ Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» եւ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցությունները:

Ըստ Սահմանադրության՝ Հանրապետության նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին:

Ապրիլի 9-ից Հայաստանն անցել է կառավարման խորհրդարանական համակարգի: Նույն օրը երդվել ու պաշտոնը ստանձնել է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը:

17 ապրիլի 2018թ.

Հանրապետության գյուղնախարարի պաշտոնակատարը՝ Սյունիքում

ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Իգնատի Առաքելյանը երկօրյա այցով Սյունիքի մարզում էր: Այցի նպատակն էր մարզի ոլորտի պատասխանատուների եւ ֆերմերների հետ քննարկել գյուղատնտեսության բնագավառում ընթացիկ խնդիրները եւ ներկայացնել նախարարության նոր ծրագրերն ու նախաձեռնությունները:

Այցի սկզբում Իգնատի Առաքելյանը մասնակցել է Սյունիքի մարզպետարանում կազմակերպված խորհրդակցությանը, որին ներկա էին մարզպետ Վահե Հակոբյանը, նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Գեղամ Գեւորգյանը, համայնքների ղեկավարներ, ֆերմերներ, պաշտոնատար այլ անձինք:

Իգնատի Առաքելյանը համառոտ ներկայացրել է գյուղոլորտում իրականացվող ընթացիկ եւ նախատեսվող ծրագրերը, այդ թվում՝ կաթիլային ու անձրեւացման եղանակով ոռոգման համակարգերի եւ կարկտապաշտպան ցանցերի ներդրման նախաձեռնությունները, անդրադարձ կատարել սերմնարտադրության զարգացման հարցերին:

Խորհրդակցության ընթացքում Իգնատի Առաքելյանը կարեւորել է նաեւ համայնքային անասնաբույժների ինստիտուտի ներդրման հարցը: Անդրադարձ է կատարվել նաեւ մարզի արոտավայրերի ջրարբիացման ուղղությամբ կատարվող աշխատանքներին:

Ինտենսիվ այգիների

էջ 7

Վառ երեւակայությունից եւ խենթությունից ծնված ստեղծագործություններ

Փարաջանովյան անկրկնելի արվեստին հաղորդակցվելու եզակի առիթ ունեցավ մարզկենտրոնի արվեստասեր հասարակությունը: Կապանի արվեստի քոլեջի ցուցասրահում կրթօջախի դասախոս Հասմիկ Գրիգորյանի նախաձեռնությամբ բացվեց **«Սերգեյ Փարաջանովի աշխարհ. արվեստ առանց սահմանների»** լուսանկարչական ցուցահանդեսը: Մինչեւ ցուցահանդեսի մուտքը երիզող ժապավենի կտրելը՝ Երեւանի Փարաջանովի անվան թանգարանի տնօրեն, լուսանկարիչ, մեր հայրենակից Զավեն Սարգսյանը ներկաներին հակիրճ տեղեկացրեց, որ ցուցահանդեսը շրջել է եվրոպական երկրներում՝ Գերմանիայի Դաշնություն, Սլովենիա, Սլովակիա, մի ամիս առաջ՝ Բուլղարիա, ինչպես նաեւ Ռուսաստան: Ինքը մտերիմ է եղել Փարաջանովի հետ (ծանոթացել է 1978-ին), իսկ 12 տարի նրան լուսանկարել է: Նաեւ ասաց, որ հայտնի կինոռեժիսորը սիրով է լուսանկարվում եւ հաճախ է ինքն ընտրում լուսանկարման ձեւը:

Փարաջանովը 20-րդ դարի կինոյի խոշորագույն նորարարներից մեկն է, ով բուռն ու հակասական կյանքով է ապրել: Նրան համաշխարհային ճանաչում բերեց «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմը (1964թ.), որը դասվել է աշխարհի լավագույն ֆիլմերի շարքը եւ արժանացել 28 տարբեր պարգեւի: 1965-ին սկսել է նկարել «Կիեւյան որմնանկարներ» հակապատերազմական ֆիլմը, որը շուտով արգելվում է իշխանությունների կողմից: 1966-ին նրան հրավիրում են Հայաստան, որտեղ Փարաջանովն առաջարկում է նկարահանել «Սայաթ-Նովա» ֆիլմը: Նա շրջում է Հայաստանով, ծանոթանում ճարտարապետությանը եւ արվեստին, մեծ ոգեւորությամբ նկարահանում ֆիլմը, որով հաստատվում է կինոռեժիսորի արվեստի ինքնատիպությունը: Ֆիլմի՝ գունագեղ կտավներ հիշեցնող կադրերը վերակերտում են աշուղ եւ բանաստեղծ Սայաթ-Նովայի կենսագրությունը, բացահայտում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են երգը, սերն ու հավերժությունը: Այս ամենով հանդերձ՝ ֆիլմը դժվարությամբ էկրան բարձրացավ՝ «Նռան գույնը» վերնագրով: Դրանից հետո Փարաջանովը 15 տարի վտարվեց կինոյից, ավելին՝ երկու անգամ բանտ նետվեց 1974-1978թթ. եւ ութ ամիս Թիբիլիսիում 1982թ-ին: Այդ դաժան վերաբերմունքի պատճառը նրա համարձակ խոսքն էր եւ արվեստը, որ ափերից հանում էր իշխանություններին: Այդ տարիներին, երբ Փարաջանովը զրկված էր ֆիլմ նկարահանելուց, իր ողջ ստեղծագործական ավյունն ուղղեց գծանկարներ, կոլաժներ, տիկնիկներ, գլխարկներ եւ արվեստի այլ գործեր ստեղծելուն:

«Կոլաժը» սեղմած ֆիլմ է. ասում էր Փարաջանովը. **«Եթե ֆիլմի ստեղծումը կախված է բազմաթիվ հանգամանքներից, ապա կոլաժում արվեստագետն ազատ է անել այն, ինչ ուզում է»:**

էջ 8

Անդրեյ Սինյակով. «Մենք հավատում ենք, որ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը (Ագարակի ՊՄԿ) «բախտավոր» աստղի տակ է ծնվել»

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը Հայաստանի Հանրապետության հանքային արդյունաբերության համար առանցքային նշանակություն ունեցող ձեռնարկություններից մեկն է: 2009 թվականից կոմբինատը հանդիսանում է «ԳեոՊրոՄայնինգ» դիվերսիֆիկացված միջազգային ընկերությունների խմբի կարեւոր ակտիվներից, որին պատկանում են նաեւ ՀՀ Սոթքի ոսկու հանքը եւ Արարատի ոսկու վերամշակման ֆաբրիկան: 2017 թվականից կոմբինատում սկսվեց տեխնիկական վերազինման, արտադրության նորացման, արտադրական հզորությունների ընդլայման եւ արտադրության վերազինման մասշտաբային աշխատանքների նոր փուլը, ինչը միջազգային գնային ոչ այնքան բարենպաստ կոնյուկտուրայի պայմաններում հնարավորություններ է ստեղծում ոչ միայն ձեռնարկության անխափան աշխատանքի համար, այլեւ այն դարձնում է հուսալի գործատու: Ձեռնարկությունը կայունորեն իր ավանդն է ներդնում տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Ձեռնարկության խնդիրների եւ ապագա ծրագրերի մասին պատմում է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Անդրեյ Սինյակովը:

***

Անդրեյ Անատոլիի Սինյակով. «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի տնօրեն 2017 թվականի հունվար ամսից: Տեխնիկական գիտությունների թեկնածու, լեռնային ինժեներ, տնտեսագետ, ավարտել է Ներյունգրի քաղաքի (Յակուտիա) Յակուտսկի պետական համալսարանի մասնաճյուղ հանդիսացող Տեխնիկական ինստիտուտը «Բաց լեռնային աշխատանքներ եւ կիրառական ինֆորմատիկան էկոնոմիկայում» մասնագիտություններով: 1997-2011 թվականների ընթացքում անցել է էքսկավատորի մեքենավարի օգնականից մինչեւ «Յակուտուգլ» ԲԲԸ տեխնիկական տնօրենի տեղակալի աշխատանքային ուղին: 2011-2014 թվականներին աշխատել է «Տիմիր» ՓԲԸ-ում, որը Յակուտիայում զբաղվում է երկաթի հանքաքարի արդյունահանմամբ, գլխավոր ինժեների տեղակալ՝ տեխնիկական վարչության ղեկավար: 2014 թվականին աշխատել է լեռնային եւ շինարարական տեխնիկայի վաճառքով զբաղվող «Տեխստրոյկոնտրակտ» ՍՊԸ-ի տնօրեն: 2014-ից մինչեւ 2016 թվականներն աշխատել է որպես Յակուտիայի արդյունաբերության նախարարի տեղակալ:

***

- Պարոն Սինյակով, Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում իրականացվում է հզորությունների ընդլայնման խոշոր ներդրումային ծրագիր: Համաձայն ծրագրի, մի քանի տարիների ընթացքում կոմբինատի տեխնիկական վերազինման նպատակով զգալի միջոցներ պետք է ներդրվեն նորացնելու համար այնպիսի արտադրական պրոցեսներ, ինչպիսիք են ֆլոտացիան, մանրացումը: Կոմբինատը պետք է ընդլայնի արտադրությունը եւ ավելացնի աշխատատեղերի քանակը: Որո՞նք են ծրագրի իրականացման ժամկետները, եւ ո՞ր փուլում է այն այսօր գտնվում:

- Եթե հակիրճ ներկայացնեմ, ապա «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ զարգացման ստրատեգիայի շրջանակում պլանավորվում է մոտ ապագայում, առաջին հերթին, հարստացման ֆաբրիկայի արտադրական հզորություններն ավելացնել 3,5 մլն տոննայից մինչեւ 4,1-4,5 մլն տոննա հանքաքարի տարեկան վերամշակում: Այսօր պայմանագրեր են կնքվում նախագծային ինստիտուտների հետ տեխնիկական նախագծի մշակման, անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ:

- Այնուամենայնիվ, որքանո՞վ կավելանա Ագարակի ՊՄԿ արտադրական հզորությունը: Որքանո՞վ կավելանա ֆաբրիկայի արտադրողականության արդյունավետությունը: Արդյո՞ք ընկերությունը 2017թվականի արդյունքներով հասել է 3,5 մլն տոննա պլանային ցուցանիշին: Ընկերությունը ե՞րբ կկարողանա հասնել պլանավորված 6 մլն տոննա արտադրողականությանը, եւ շահութաբերության ինչպիսի՞ մակարդակի կհասնի այդ դեպքում:

- 2017 թվականը, ընդհանուր առմամբ, արդյունավետ էր Ագարակի ՊՄԿ-ի համար, չնայած 2015-2016 թվականների ճգնաժամային երեւույթների արձագանքներին: Առաջին կիսամյակում մենք անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկեցինք ունեցած սարքավորումները վերանորոգելու ուղղությամբ, իսկ մայիս ամսին սկսեցինք տեխնիկական վերազինման ծրագրի իրականացումը: Ձեռք ենք բերել 13 միավոր MT-86 ինքնաթափեր, թրթուրավոր բուլդոզեր «Շանտույ» SD-32 եւ երկու PC-400 «Կոմացու» էքսկավատոր: Ընդհանուր առմամբ՝ ձեռքբերված սարքավորումների գումարը կազմում է ավելի քան 2.5 մլն ԱՄՆ դոլար: Իրականացված աշխատանքների արդյունքում 2017 թվականի կեսից սկսվեց արտադրության աճը: Այժմ կոմբինատի առջեւ դրված է 4,1- 4,5 մլն տոննա հանքաքարի վերամշակման ծավալին հասնելը մինչեւ 2019 թվականը, այնուհետեւ երկարաժամկետ հեռանկարում մինչեւ 6 մլն տոննա ծավալին: Նշեմ, որ 4,1- 4,5 մլն տոննա հանքաքարի վերամշակման ծավալը թույլ կտա իջեցնել տեսակարար ինքնարժեքը մինչեւ այն մակարդակը, որի դեպքում Ագարակի ՊՄԿ-ն կարող է շահութաբեր մնալ նույնիսկ մետաղի շատ ցածր գնի դեպքում, ինչպիսին 2015- 2016 թվականներին էր:

- Ինչպիսի՞ք են 2017 թվականին Ագարակի ՊՄԿ աշխատանքի ֆինանսական արդյունքները եւ միջին հեռանկարային ծրագրերը:

- 2017 թվականի ֆինանսական արդյունքները շատ ավելի նշանակալից էին, քան նախորդ 2015-2016 թվականներին: 2018 թվականին ձգտելու ենք առավել դրական արդյունքների: Ֆինանսական ուղղությամբ զարգացման հիմնական ուղղություններն են՝ վարկային բեռի փոքրացումը փոխառու միջոցների՝ սեփական կապիտալի նկատմամբ հարաբերության նվազեցմամբ, ֆինանսական ծախսերի նվազեցումը՝ պորտֆելում ցածր տոկոսադրույքով վարկերի ավելացման հաշվին, ինչպես նաեւ հիմնական մատակարարներից արտոնյալ վարկային ժամանակահատվածներ ստանալու միջոցով, երկարաձգելով հումքի եւ նյութերի դիմաց պարտավորությունների վճարումը: Մենք կարծում ենք, որ Ագարակի ՊՄԿ-ի ֆինանսական դրության բարելավումը հաշվի առնելով, նշված ծրագրերը լիովին իրականանալի են:

- Ինչպե՞ս եք Դուք վերաբերում Բրիտանական միջազգային նախաձեռնությանը EITI (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը), որին միացել է նաեւ Հայաստանը:

- Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը միջազգային ստանդարտ է, որը ենթադրում է նավթի, գազի, հանքային ռեսուրսների արդյունահանման սեկտորների թափանցիկ կառավարում: Բնական ռեսուրսները պատկանում են երկրի քաղաքացիներին: Այդ ռեսուրսների արդյունահանումը նպաստում է տնտեսական եւ սոցիալական զարգացմանը: Սակայն, բնական ռեսուրսների վատ կառավարումը հաճախ հանգեցնում է կոռուպցիայի եւ կոնֆլիկտների: Որպեսզի բնական ռեսուրսները պատկանեն Հայաստանի բոլոր քաղաքացիներին հարկավոր է, որ հասարակությունը կարողանա վերահսկել, թե ինչպես են օգտագործվում երկրի հարստությունները՝ համաձայն ՀՀ օրենսդրության: ԱԵԹՆ ստանդարտը ենթադրում է, առաջին հերթին, ֆինանսական հաշվետվությունների հասանելիություն հասարակության համար, ինչպես արդյունահանող ճյուղի, այնպես էլ պետության կողմից ստացված եկամուտների վերաբերյալ: Անկասկած, հասարակությունը պետք է տեղեկացված լինի արդյունահանող ձեռնարկությունների հարկային եւ սոցիալական պատասխանատվությունների վերաբերյալ: Այնպես որ, ես միանգամայն դրական եմ վերաբերվում ԱԵԹՆ-ին:

- Ագարակի ՊՄԿ-ն մոնոարտադրական ձեռնարկություն է: Ինչպիսի՞ սոցիալական միջոցառումներ է ընկերությունն իրականացնում Մեղրու եւ Ագարակի համայնքներում: Որքանո՞վ եք ներթափանցել քաղաքի հասարակական կյանքին, եւ ինչպիսի՞ն է Ձեզ համար Հայաստանի արեւաշատ հարավը հյուսիսային Յակուտիայից հետո:

- Յակուտիայի հետ կապված է իմ կյանքի մեծ մասը, ես այնտեղ ծնվել եմ, սովորել, ամուսնացել, անցել էքսկավատորի մեքենավարի օգնականից մինչեւ Յակուտիայի արդյունաբերության նախարարի օգնականի աշխատանքային ուղին: Այժմ, ճակատագիրն ինձ բերել է այս բարեբեր երկիրը՝ Հայաստան: Այստեղ ինձ շատ է դուր գալիս, այստեղի մարդիկ սքանչելի են, աշխատասեր, բարեսիրտ եւ հյուրասեր: Եղանակը մեղմ է, աշխատանքս հետաքրքիր: Ես մտադիր եմ այստեղ երկար աշխատել, որպեսզի իմ գիտելիքները, հմտությունները, տեղի բնակիչների հետ, օգտագործեմ կոմբինատում եւ Ագարակում կյանքի կոչելու «ԳեոՊրոՄայնինգ» ընկերության բոլոր նախագծերը:

- 2018 թվականին լրանում է կոմբինատի գործարկման 55-ամյակը: Ինչպե՞ս է ընկերությունը նախատեսում նշել այդ հոբելյանը:

- Այո, 2018 թվականի մայիսին լրանում է մեր ձեռնարկության գործարկման 55-ամյակը: Ձեռնարկությունը զարգացման երկար ճանապարհ է անցել, սակայն, անկասկած, դեռ անելիքներ շատ կան: Մենք հավատում ենք, որ Ագարակի ՊՄԿ-ն «բախտավոր» աստղի տակ է ծնվել, այն այսօր ոչ միայն աշխատում է, այլեւ աշխատանքին զուգահեռ նորացվում, իսկ մոտ ապագայում հասնելու ենք նաեւ արտադրողականության ավելացման, ինչը, բնականաբար, կնպաստի ոչ միայն աշխատատեղերի ավելացմանը, այլեւ Մեղրի համայնքի սոցիալական ծրագրերի համար նախատեսվող ֆինանսավորման ավելացմանը: Այսօրվա դրությամբ «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ աշխատողների թիվը հասնում է 996-ի: Նորացման ծրագրի եւ արտադրական հզորությունների ընդլայնման շնորհիվ ենթադրվում է, որ կավելանա եւս 50-ից ոչ պակաս աշխատատեղ:

Ընկերությունը նախատեսում է մայիսի վերջին անցկացնել մի շարք տոնական միջոցառումներ՝ նվիրված հոբելյանական տարեթվին: Գաղտնիքներ չբացեմ, բայց ասեմ, որ մեր քաղաքի, կոմբինատի աշխատողների եւ վետերանների համար ուրախ ավանդական տոն կկազմակերպենք:

Андрей Синяков: «Мы верим, что АММК «родился» под счастливой звездой»

Агаракский медно-молибденовый комбинат (АММК) – одно из ключевых предприятий горнодобывающей промышленности Армении. С 2009 года комбинат является важным активом диверсифицированной международной группы компаний GeoProMining (GPM), владеющей также Сотским золотоносным месторождением и Араратской золотоизвлекательной фабрикой. С 2017 года на комбинате началась реализация нового этапа масштабных работ по дальнейшей модернизации, техническому перевооружению, расширению производственных мощностей и росту производительности, которые должны привести не только к бесперебойной работе самого предприятия в условиях не совсем благоприятной международной ценовой конъюнктуры, но и к усилению позиций предприятия в качестве надежного работодателя, вносящего существенную лепту в социально-экономическое развитие региона. О задачах предприятия и планах на будущее рассказал гендиректор АММК Андрей Синяков.

***

Андрей Анатольевич Синяков- Генеральный директор ЗАО «Агаракский медно-молибденовый комбинат» с января 2017 г. Кандидат технических наук. Горный инженер, информатик-экономист, окончил Технический институт (филиал) Якутского государственного университета в г.Нерюнгри, Республика Саха (Якутия), по специальностям «Открытые горные работы» и «Прикладная информатика в экономике». В период 1997 - 2011 гг. прошел путь от помощника машиниста экскаватора, до заместителя технического директора – Начальника управления перспективного развития, технологии и развития горных работ в ОАО ХК «Якутуголь». Работал в 2011 – 2014 гг. заместителем главного инженера – Руководителем технического управления ЗАО «ГМК «Тимир», занимающимся добычей железной руды в Якутии, в 2014 стал директором ООО «Техстройконтракт» по продаже и аренде горной и строительной техники. С 2014 по 2016 гг. работал заместителем министра промышленности Республики Саха (Якутия).

***

- Андрей Анатольевич, на АММК реализуется крупная инвестиционная программа по расширению мощностей. Согласно программе, в течение нескольких лет должны быть вложены существенные инвестиции в техническое переоснащение комбината, модернизации таких процессов как флотация, измельчение. Комбинат должен расширить производство и увеличить рабочие места. Каковы сроки реализации программы и на какой стадии вы находитесь сегодня?

- Если коротко, то в рамках стратегии развития ЗАО «АММК» планируется в ближайшей перспективе увеличение производственных мощностей, в первую очередь, обогатительной фабрики с 3,5 млн.тонн до 4,1-4,5 млн.тонн переработки руды в год. Сегодня заключены договора с проектными институтами по разработке Технического проекта и прорабатываются вопросы по поставке необходимого оборудования.

Ժամանակը կյանք է փրկում

Ապրիլի 14-ին Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնը, որը երբեք հյուրերի պակաս չի ունենում, այս անգամ հյուրընկալել էր Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Ջոնաթան Լաքոթին, ով առաջին անգամ է լինում թե՛ Գորիսում , թե՛ այս կենտրոնում: Այցի կապակցությամբ «Ակցիա Ֆրանսիա-Հայաստան» բժշկական ասոցիացիայի նախագահ Ավետիս Մատիկյանի ներկայությամբ կազմակերպվեց ընդունելություն՝ կենտրոնի «Աշոտ Ալեքսանդրյան» սրահում:

Հանդիպմանը ներկա էին ֆրանսիացի սենատոր Օլիվյե Կադիկը, Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, «Ֆրանսիա-Հայաստան առողջապահական շարժում» ասոցիացիայի անդամ Միշել Սենոն, ֆրանս-հայկական համալսարանի ռեկտոր Ժան -Մարք Լավեսթը եւ պաշտոնատար այլ անձինք:

Գորիսի ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոնը բացվել է 2013 թ.: Այն «Ֆրանսիա-Հայաստան առողջապահական շարժում» ասոցիացիայի առաջնորդող ծրագիրն է: Կենտրոնը միակն է տարածաշրջանում եւ ապահովում է Սյունիքի եւ Վայոց ձոր մարզերի բնակիչների բուժօգնությունը: Կենտրոնն իրականացնում է սրտաբանական հետազոտություններ, կորոնարոգրաֆիա եւ ստենտավորում:

Հանդիպմանը ներկա էին նաեւ հիվանդներ, ովքեր այստեղ ստացել են բուժօգնություն, որի շնորհիվ բարձրացել է նրանց կյանքի որակը: Այստեղ է նաեւ սիսիանցի Աշոտ Մինասյանը, ով ազատամարտիկ է, արցախյան պատերազմի մասնակից ու հրամանատար: Դեսպանը ծանոթանալով նրա հետ, ոչ միայն լսեց զրուցակցի կյանքի պատմությունը, որը ներկայացրեց Ավետիս Մատիկյանը, այլեւ խորհուրդ տվեց՝ չծխել, թողնել ծխելը: Կփորձեմ՝ եղավ Աշոտ Մինասյանի պատասխանը: Այնուհետեւ դեսպանն ասաց՝ ցանկանում եմ, որ նա ու նաեւ մյուս հիվանդներն այսուհետեւ այստեղ չգան որպես հիվանդ:

Դեսպանը եւ հյուրերը շրջեցին կենտրոնի բաժիններում, ծանոթացան բուժանձնակազմի հետ: Նրան ներկայացվեցին այստեղ կատարվող բուժծառայություններ ու նաեւ, թե դրանք ինչպես են կատարվում: Դեսպանը հաճելիորեն զարմացած էր կենտրոնի բուժզինման մակարդակով: Իսկ դրանք ժամանակակից են եւ համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

Վիրաբուժական բաժին մտնելուց՝ ներկաները հագան խալաթներ: Առանց դրա ոչ մեկն իրավունք չունի այդտեղ մտնելու եւ շփվելու հիվանդների հետ: Իսկ հիվանդներն այդ պահին Վայքից էին, Կապանից, Սիսիանից, Տեղ համայնքից: Հիվանդներից վայքեցի Վարուժան Աթանյանը, ով բուժօգնություն է ստացել այստեղ, գոհ է բուժսպասարկման որակից: Նա շնորհակալություն հայտնեց ֆրանսիացի բարեկամներին, ովքեր իրենց հնարավորություն են տվել Գորիսում բուժվելու: Հետո, ինչպես ասում են, Վարուժանն «առիթավորվում» է եւ ասում՝ այսքան լավի մոտ ափսոս վատն էլ կա, իսկ վատը ճանապարհն է, մայրուղուց դեպի կենտրոն տանող 1.1 կմ, որ ճանապարհը խիստ անբարեկարգ է :

Ավետիս Մատիկյանը խոստացավ հարցը բարձրացնել Ֆրանսիայի համապատասխան ատյաններում: Սակայն պարզվեց, որ դրա անհրաժեշտությունը չկա. Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը խոստացավ հարցը դրականորեն լուծել: Ինչպես ասում են՝ տպավորություններն անջնջելի են; Եվ դեսպանն ասում է՝ այս կենտրոնը մեր կառավարության ամենամեծ իրագործումներից մեկն է առողջապահության ոլորտում եւ հատկապես արդի վիրահատության բնագավառում ու այն էլ այսպիսի մի հեռավոր շրջանում, որի կարիքը շատ կա: Ես այստեղ տեսա մի կենտրոն, որտեղ ամեն ինչ կատարյալ է, ուր կան ժամանակակից սարքավորումներ եւ դինամիկ աշխատողներ: Եվ ուրախ եմ նաեւ, որ այստեղ ծածանվում է Ֆրանսիայի պետական դրոշը:

Եվ քանի որ խոսվեց աշխատողների մասին, Ա.Մատիկյանը ներկայացնում է նրանց եւ ասում՝ այս մարդիկ ժամանակի արժեքը լավ են գիտակցում, նրանք գիտեն, որ մեկ վայրկյանն անգամ կարող է ճակատագրական լինել հիվանդի համար եւ անում են հնարավորն ու անհնարինը մարդկանց համար: Ժամանակը կյանք է փրկում. սա է կենտրոնի աշխատողների նշանաբանը:

Որպես լավ աշխատանքի արժանի գնահատական, կենտրոնը պարգեւատրվում է Ֆրանսիայի սենատի մեդալով:

Ալվարդ Մեսրոպյան

- И все же, насколько увеличится производственная мощность АММК? Насколько увеличится эффективность выработки на фабрике? Вышла ли компания по результатам 2017 года на плановый показатель в 3,5 млн.тонн руды? Когда компания выйдет на запланированные 6 млн.тонн? До какого уровня рентабельности таком случае будет удастся выйти предприятию?

- 2017 год для АММК в целом был продуктивным, даже невзирая на отголоски кризисных явлений 2015-2016 годов. В первом полугодии нами были проведены необходимые мероприятия по ремонту имеющегося оборудования, восстановлению его парка, в мае начали реализовывать программу технического перевооружения. Были приобретены 13 единиц самосвалов МТ-86, гусеничный бульдозер «Шантуй»SD-32 и два экскаватора»Комацу»PC-400.В целом приобретено оборудования на сумму более 2.5 млн. долларов США. В результате проведенной работы с середины 2017 года начался рост объемов производства. Теперь перед комбинатом стоит задача выйти на уровень по переработке руды в объеме 4,1-4,5 млн. тонн в 2019 году и в долгосрочной перспективе до 6 млн. тонн. Отмечу, что выход на объем переработки в 4,1-4,5 млн.тонн в год позволит АММК снизить удельную себестоимость до такого уровня, при котором АММК может оставаться рентабельной даже при очень низких ценах на металлы, как скажем были в 2015- 2016 годах.

- Каковы финансовые результаты работы АММК за 2017 год и планы на среднесрочную перспективу?

- Финансовые результаты в 2017 были намного лучше, чем результаты за предыдущие 2015-2016 гг. В 2018 году мы будем стремиться к еще более положительными результатам.Основные направления развития в финансовом плане: уменьшить кредитную нагрузку за счет уменьшения соотношения заемных средств к собственному капиталу; уменьшить финансовые расходы за счет увеличения в портфеле кредитов с низкими процентными ставками, а также получения льготных кредитных периодов от основных поставщиков с отсрочками платежей по закупке сырья и материалов. Считаем, что с учетом улучшения финансового состояния АММК, данные планы осуществимы.

- Как вы относитесь к британской международной инициативе EITI (Инициатива прозрачности в добывающих отраслях – Ред.), к которой присоединяется Армения?

- Инициатива Прозрачности в Добывающих Отраслях (ИПДО) – это общемировой стандарт, который способствует открытому управлению и подотчетности в секторах нефтяных, газовых и минеральных ресурсов. Природные ресурсы принадлежат гражданам страны.Добыча этих ресурсов может приводить к экономическому росту и социальному развитию.Однако плохое управление природными ресурсами часто приводило к коррупции и конфликтам. Для того,чтобы природные ресурсы приносили выгоду всем гражданам Армении, необходима более высокая открытость и контроль общественности за тем, как используется богатство добывающего сектора страны, в соответствии с законодательством РА.Стандарт ИПДО подразумевает под собой, в первую очередь, доступность общественности к финансовой отчетности,как добывающей отрасли, так и к отчетности государства о полученных доходах от данной сферы.Несомненно, общественность должна быть информирована о реальной налоговой и социальной нагрузке добывающих предприятий. Так что я отношусь к инициативе вполне положительно.

- АММК является монопроизводственным предприятием. Какие социальные мероприятия реализовывает компания в общиных Мегри и Агарак? Насколько Вам удалось влиться в общественную жизнь города и как Вам солнечный юг Армении после северной Якутии?

- С Якутией связана большая часть моей жизни, я там родился, учился, женился, прошел путь от помощника машиниста экскаватора до заместителя министра промышленности Республики Саха(Якутия).Сейчас, волею судьбы, приехал в этот благодатный край - Республику Армения. Мне здесь очень нравиться, здесь замечательные, трудолюбивые, отзывчивые и гостеприимные люди. Мягкий климат и очень интересная работа.Поэтому решил для себя остаться здесь на долго, чтобы приложить все свои знания, умения, навыки для претворения в жизнь на комбинате и в г.Агарак совместно с местными жителями всех проектов компании «Геопромайнинг».

- В 2018 году АММК исполняется 55-летие со дня запуска комбината. Как компания планирует отметить юбилей?

- Да, в мае 2018 года исполняется 55 лет со дня запуска нашего предприятия. Пройден большой путь, предприятие работает, но несомненно предстоит сделать еще многое. Мы верим, что АММК «родился» под счастливой звездой и на сегодняшний день предприятие не только работает, но и модернизируется, а в скором будущем будет увеличение производительности, что естественным образом отразится, как на увеличении рабочих мест, так и на росте финансирования программ социальную ответственность предприятия перед Мегринской общинной. По состоянию на сегодняшний день численность работников ЗАО «АММК» составляет 996 человек. За счет модернизации и увеличения производственных мощностей предполагается открыть дополнительно не менее 50 рабочих мест.

Компания планирует в конце мая ряд праздничных мероприятий в честь этой знаменательной даты. Не будем раскрывать секреты, организуем традиционно хороший праздник для нашего родного города, дорогих сотрудников и ветеранов нашего комбината.

1918-1920 ԹԹ. ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ No_9(467)

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խորհրդայնացմանն անմիջապես հաջորդեց Հեղկոմի իշխանությունը, իր ցանցը հյուսեց չեկան, եւ ինչ թուրքեր չէին հասցրել, շարունակեցին հայ բոլշեւիկները: Չեկայի առաջին գործը եղավ նախկին ղեկավարների՝ վարչապետերի, նախարարների, խորհրդարանի պատգամավորների, խմբապետերի ձերբակալությունը՝ Հ. Օհանջանյան, Ա. Սահակյան, Ռ Չիլինգարյան (Ռ. Դարբինյան), Հ. Տեր-Դավթյան, Վ. Նավասարդյան, Վ. Բաբալյան (նոր էր ազատվել թուրքական գերությունից), Գ. Վարշամյան, Բ. Իշխանյան, Համազասպ եւ ուրիշներ: Դեկտեմբերի վերջին Բաքու աքսորվեցին 70 առաջնակարգ սպաներ: Հունվարի 10-ին զինակիցների հետ Ռուսաստան աքսորվեց Դրոն, հունվարի 24-ին նույն ճանապարհով ուղարկեցին 1200 զինվորականի, որոնց մեջ էին ազգային բանակի սյուները՝ սպարապետ Նազարբեգյանը, զորավարներ Սիլիկյանը, Հախվերդյանը, Ղամազյանը: Սկսվեցին բռնագրավումները, այլ կերպ՝ թափ առավ ալան-թալանը. **«Գրավում էին ամեն ինչ – բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տավար, հավ ու հավկիթ, մինչ եւ իսկ թել ու ասեղ: Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնություն, այժմ իրենից էր խլվում հացի վերջին պատառը եւ ուղարկվում Ռուսաստան»** (ՍՎ, ՀՀ, էջ 511):

Այս ամենի անդրադարձը նաեւ Չարենցի հրամանագրերում է ու պաշտոնական գրությունների մեջ (տես ԳՄ, էջ 195-217):

Այս պայմաններում բռնկվեց փետրվարյան ապստամբությունը: Սկսվեց 18-ին, Երեւանում լռեցվեց ապրիլի 2-ին, ծայրամասերում հուլիսի 10-ին: Այս ընթացքում իշխանությունն անցավ Հայրենիքի փրկության կոմիտեին, որի նախագահը վերջին վարչապետ Սիմոն Վրացյանն էր:

1921թ. ապրիլի 2-ին ապստամբությունը ճնշվեց: **«Ռուս զինվորների սվինների պաշտպանությամբ» Արտաշատից ամոթահար Երեւան վերադարձավ Հեղկոմը: «Կարելի է երեւակայել բոլշեւիկյան սարսափը, որ մարդիկ ապաստան էին խնդրում թյուրքից»»** (ՍՎ, ՀՀ, էջ 562):

Անկախության կորուստը վավերացվեց Կարսի խորհրդաժողովում (26. 09.– 13. 10. 1921), որտեղ թուրքերի պահանջով վավերացվեց Մոսկվայի ռուս-թուրքական դաշնագիրը (16. 03. 1921): Հաջորդում է «Լոզանի անարգ դաշնագիրը» (ՍՎ, ՀՀ, էջ 568) եւ իսպառ մոռացնել տալիս Սեւրի դաշնագրի հուսադրիչ սպասումը:

Ինչ եղավ՝ 1915-1916թթ. ցարը հետաքրքրվեց հայությամբ, եւ երկիրն ու ժողովուրդը ոչնչացան, 1920-ին Սեւրի պայմանագրով Վիլսոնը գծեց Հայաստանի սահմանները, եւ թուրքը զենքով վերացրեց այդ ծրագրի իրականացման ամենայն հույս:

«Բարեկամները» «մտահոգվեցին», թուրքը հարցերը լուծեց:

Հետո եկավ Ալեքսանդր Մյասնիկյանը, ձեւավորվեց նոր Հեղկոմ, երկիրն ընկավ քաղաքական նոր հոսանքի մեջ. **«Ալ. Մյասնիկյանը ստանձնելով Հայաստանի Հեղկոմի նախագահությունը, ՆԷՊ-ի շրջանին հատուկ համեմատաբար ավելի մեղմ եւ շինարար քաղաքականություն հետեւեց երկրում՝ իրեն գործակից ունենալով Ս. Սրապիոնյան-Լուկաշինի եւ Ս. Տեր-Գաբրիելյանի նման ավելի լուսամիտ եւ անպայման ավելի հայրենասեր բոլշեւիկներ: Հայաստանի ժողովուրդը մի պահ ազատ շունչ քաշեց եւ նվիրվեց շինարարության: Պարսկաստանից վերադարձավ եւ տարագրված մտավորականության մի մասը՝ ակադ. Ա. Թամանյանի գլխավորությամբ»** (ՍՎ, ՀՀ, էջ 567): Այս վերաբերմունքը՝ **«ավելի լուսամիտ եւ անպայման ավելի հայրենասեր»** գնահատանքով, անհետեւանք չէր անցնելու՝ Մյասնիկյանը պետք է դառնար կազմակերպված ինքնաթիռային աղետի զոհ, իսկ Լուկաշինին ու Տեր-Գաբրիելյանին 1937-ը պետք է հոշոտեր:

Չարենցը սգաց Մյասնիկյանի կորուստը, Թուրքիային՝ իր վարած երկերեսանի քաղաքականության համար համարեց «Միջազգային պոռնիկ», եւ նշված քաղաքական գործիչների հետ մեկտեղ դարձավ ստալինյան հալածանքների զոհ:

***

Ինչպես պատմությունը, այնպես եւ գեղարվեստը Առաջին համաշխարհային պատերազմի տեսադաշտում են: Ըստ պաշտոնական տվյալների՝ ռուսական բանակ էր զորակոչված երկու միլիոն հաշվվող ռուսահայության 13 տոկոսը, ավելի քան 250000: Ընդհանուր պատերազմի մեջ դաշնակից ուժերի շարքում զենքի էր կոչված ավելի քան 300000 հայ:

1914 թ. հունվարի 26-ին Թուրքիայի մեծ վեզիր Սայիդ Հալիմը եւ Պոլսում Ռուսաստանի ներկայացուցիչ Գուլկեւիչը ստորագրեցին բարենորոգումների ծրագիր, ըստ որի՝ **«Հայկական վեց վիլայեթներին պիտի կցվեր Տրապիզոնի նահանգը եւս»** (ՍՎ, ՀՀ, էջ 5): Այդ տարածքը պետք է բաժանվեր երկու մարզպանությունների. առաջինի մեջ պիտի մտնեին Էրզրումի, Տրապիզոնի, Սվազի վիլայեթները, երկրորդի մեջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Տիգրանակերտի: Վերահսկիչները պետք է լինեին եվրոպացիներ, թեկնածուներին պետք է նշանակեր Բարձր Դուռը:

Այս առաջարկությունն արվել է Ռուսաստանի պնդումով: Գերմանիան հրաժարվել է այդ ծրագրից: Հայ կամավորական խմբերի քաղաքական նշանակությունն այդ ծրագիրը կյանքի կոչելն էր, որ նշանակում էր՝ Ռուսաստանի հովանու ներքո ինքնավարություն վեց վիլայեթներին եւ նրանց անբաժան մաս հայաբնակ Կիլիկիային:

Կամավորական խմբերն սկզբում չորսն էին՝ Անդրանիկ, Քեռի, Դրո, Համազասպ: Ավելացավ հինգերորդը՝ գնդապետ Ջանփոլադյանի գլխավորությամբ: 1915-ի գարնանը Քեռիի, Դրոյի, Համազասպի խմբերը միավորվեցին Արարատյան ջոկատի մեջ՝Վարդանի հրամանատարությամբ, **«որ Վանի գրավման գլխավոր ուժը հանդիսացավ»** (ՍՎ, ՀՀ, էջ 10): 1915-ին կազմավորվեց իշխան Հովսեփ Արղությանի խումբը: Խմբերի թիվը հասավ 7-ի, որոնք 1916-ին **«վերակազմվեցին հայկական հրացանաձիգ գնդերի եւ մտցվեցին ռուսական կանոնավոր բանակի մեջ»** (ՍՎ, ՀՀ, էջ 10): Հայ կամավորական խմբերի կարգադրիչ մարմինը՝ Արմեն Գարո, Սիմոն Վրացյան, Հակոբ Զավարյան, Ռոստոմ Զորյան, Աբրահամ Գյուլխանդանյան, Հովսեփ Արղության, Նիկոլ Աղբալյան: Կարեւոր մի դիտարկում. **«Ռուս քաղաքականությունը փոխվում էր հայերի վերաբերմամբ, եւ հայ կամավորական խմբերը այլեւս պետք չէին»** (ՍՎ, ՀՀ, էջ 10):

Սա ռուսական խորամանկ քաղաքականությունն էր՝ հայկական հարցը շահարկելով՝ ներկայացնել իր ռազմատենչ ծրագիրը, որով բնականորեն թուրքերին պետք է գրգռեր հայերի դեմ եւ իրականացներ իր վաղնջական ցանկությունը՝Հայաստանն առանց հայերի:

Այդ ծրագիրն ավելի բորբոքվեց, երբ դեկտեմբերի առաջին կեսին Թիֆլիս այցելեց Նիկոլայ Բ.-ն եւ հայության ջերմ խանդաղատանքի պայմաններում իրեն ներկայացած հայոց վեհափառ Գեւորգ Ե.-ի միջոցով հայտարարեց. **«Ռուսաստանը պատերազմից հետո խոստանում է ապահովել Թյուրքահայաստանի ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո»** (ՍՎ, ՀՀ, էջ 11):

Այս խոստումների ներքո տեղահանությամբ ու ջարդերով թուրքերն իրականացնում էին ցեղասպանությունը: Ռուսներն առաջանում էին ու նահանջում, որի ընթացքում **«իսպառ քարուքանդ եղան եւ իթթիհատական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը»** (ՍՎ, ՀՀ, էջ 12):

Այս ամենի կենդանի հայելին Չարենցի «Դանթեական առասպել» (1915-1916) պոեմն է՝ Մեռած Քաղաքի, այսինքն՝ Վանի հրդեհված տների, սրածված ժողովրդի պատկերներով: Ինքն է՝ որպես կամավոր կամավորական խմբի մեջ եւ ժողովրդի մոտիկ օրերի արյունոտ պատմությունը:

Թյուրքահայաստանի նահանգների պարպումից հետո հետզհետե փոխվեց նաեւ վերաբերմունքը հայերի հանդեպ. **«1916 թվին այլեւս «հայկական ինքնավարության» մասին խոսք չէր լսվում. կամավորական խմբերը լուծարվեցին: Կովկասում իշխում էր մեծ իշխան (փոխարքա) Նիկոլայ Նիկոլայեվիչը՝ հակահայ քաղաքականության ներշնչողներից մեկը** (ՍՎ, ՀՀ, էջ 14):

1916 թ. գարնանը Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան եւ Ռուսաստանը մշակել էին Թուրքիայի բաժանման գաղտնի ծրագիր, ըստ որի՝ հայկական տարածքները պիտի բաժանվեին Ռուսաստանի (Էրզրում, Վան, Բիթլիս, Տրապիզոն) եւ Ֆրանսիայի (Կիլիկիան մինչեւ Խարբերդ, ավելացրած նա եւ Սիրիան) միջեւ: **«Այսպիսով իրականանում էր Գոլիցինների եւ Լոբանով-Ռոստովսկիների երազը – Հայաստանն առանց հայերի»** (ՍՎ, ՀՀ, էջ 14):

Հայության հույսերը հօդս ցնդեցին: Երկիրն ավերված էր, ժողովուրդը՝ ջարդված, ազգային գաղափարախոսությունն ու դիվանագիտությունն՝ անզոր: **«Եվ ո՞վ գիտե ի՞նչ կլիներ վախճանը, եթե վրա չհասներ հրաշքը –1917 թվի փետրվարի 28-ին, անսպասելի կերպով պայթեց Ռուսական Մեծ Հեղափոխությունը»** (ՍՎ, ՀՀ, էջ 16): Վրացյանը շարունակում է. ինչպես ամբողջ ինքնակալությունը, այդպես եւ ամբողջ Անդրկովկասը **«խելահեղ ոգեւորությամբ տոնեց բռնապետության անկումը», որովհետեւ այդ ալիքը «սրբեց-տարավ եւ կովկասյան սատրապներին»** (ՍՎ, ՀՀ, էջ 24, 17):

Ինչպես քաղաքական գործիչը՝այս դեպքում Վրացյանը, այնպես եւ բանաստեղծը՝ այս դեպքում Չարենցը, ազգային նույն մտահոգությամբ հեղափոխության հանդեպ նույն հավատն էին տածում («Ողջակիզվող կրակ» շարքը): Նույն ոգեւորությունն ապրեց նաեւ Տերյանը (1917-1920 թթ. առանձին բանաստեղծություններ):

Պատմական իրադարձությունները հաջորդում են իրար: Ժամանակավոր կառավարությունը մարտի 9-ի որոշմամբ Անդրկովկասի համար ստեղծում է Հատուկ Անդրկովկասյան Կոմիտե» ՕՅԱԿՕՄ, ՕԶԱԿՈՄ: Գրավյալ տարածքները ենթարկվում են Ժամանակավոր կառավարությանը:

Առաջին ոգեւորությունը նաեւ գործնական արդյունք է տալիս. **«Կարճ ժամանակում Թուրքահայաստանը, մանավանդ Վասպուրականի եւ Տարոն-Տուրուբերանի շրջանները վերակենդանացան»** (ՍՎ, ՀՀ, էջ 26): Գյուղերը վերանորոգվում էին, ռուսներն օժանդակում էին հայերին, թշնամանքը վերանում էր: Ազգային ոգին նորից վերելքի վրա էր: Ըստ ՀՅԴ-ի պահանջների՝ «Ազատ Հայաստանը բովանդակելու է հայկական վեց վիլայեթները եւ Կիլիկիան»:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ռազմաճակատների համար առաջարկվեց հակառակորդ զինվորների «եղբայրացման սկզբունքը» եւ կողմերին առաջարկվեց անցնել բանակցությունների (ՍՎ, ՀՀ, էջ 52): Այս անցումը հայ գրողներից լավագույն դրսեւորում է ունեցել Ստեփան Զորյանի «Ջրհորի մոտ» պատմվածքում, որտեղ ավստրիական ճակատում ռուս եւ գերման զորքերն էին դիմակայված: Ծարավը, հակառակորդ զինվորների դիրքերի միջեւ գտնվող ջրհորը եղբայրացման է տանում հակառակորդ ուժերին: Իսկ գլխավոր հերոսը Լոռու կողմերից «Ավստրու ճակատ», հասած Բաղդասարն էր: Արեւմտյան ճակատում, որտեղ Զորյանի Բաղդասարն էր, կար 80000 հայ զինվոր:

1918-1921 թթ. պատմական ժամանակաշրջանը համակողմանիորեն արտացոլված է Զորյանի ժառանգության մեջ՝ «Ցանկապատ, (1923), «Պատերազմ» (1925) պատմվածքների ժողովածուները, «Հեղկոմի նախագահը» (1923), «Գրադարանի աղջիկը» (1925) վիպակները, «Ամիրյանի ընտանիքը» (գրվել է 1921-ին, տպագրվել 1969-ին) վեպը:

Ի տարբերություն փետրվարյան հեղափոխության **«Հոկտեմբերյան հեղաշրջումը Թիֆլիսում հանդիպեց խիստ բացասական վերաբերմունքի: «...»: Անդրկովկասը հենց առաջին օրից բացասական դիրք բռնեց խորհրդային իշխանության վերաբերմամբ»** (ՍՎ, ՀՀ, էջ 53):

ՕԶԱԿՈՄ-ին փոխարինեց տեղական իշխանությունը՝ նախ Անդրկովկասյան Սեյմը, այնուհետ եւ՝ Անդրկովկասյան Կոմիսարիատը: Անդրկովկասի կոմիսար է նշանակվում Ստեփան Շահումյանը:

Ռուս զինվորները, լսելով, որ Լենինը հողը տալիս է գյուղացիներին, արագորեն լքում են ճակատը, որպեսզի գնան եւ ստանան իրենց բաժինը: Հեռացող ռուսները տեղերում դիմում էին հերթական տնաքանդության՝ հայ ազգաբնակչությանն ստիպում են հեռանալ իրենց հետ:

Այս պահը՝ դեպի Վան եւ նորից հեռացում Վանից, առկա է Մահարու «Պատանեկություն» վիպակում:

Նահանջող ռուս զորքերը ենթարկվում են մահմեդականների բռնություններին՝ կանգնեցնում են գնացքները, թալանում ամբողջ զինամթերքն ու զինվորների ունեցվածքը:

Նահանջողների մեջ էին նաեւ հայ զինվորները: Նահանջող հայկական ուժերի միջոցով Թովմաս Նազարբեկյանի հրամանատարությամբ ձեւավորվեց հայկական կորպուս: Դեռեւս պահպանվել էին Վանի, Սասունի, Երզնկայի գնդերը: Ռուսական հարավային ճակատի երկարությունը 500 կմ էր՝ Սեւ ծովից՝ Տրապիզոնից մինչեւ Վան: Լքվող դիրքերում, ինչպես կասեր Չարենցը եւ կպատկերեր «Երկիր Նայիրի» վեպում, վերահաստատվում էր «դարավոր ոսոխը»: Ընկնում են Երզնկան, Էրզրումը, Կարսը:

Ահա այս ամենի ոչ թե մեղմ երգիծանքը, այլ ահարկու ծաղրուծանակն է Չարենցի «Ազգային երազ» (1917-1918) պոեմը, թե ինչպես վստահությունը մատնվեց անճարակության հասնող ամոթալի պարտության: Չարենցն այս երկը բնորոշել է («Պոեմ երգիծական եւ ողբերգական»): Այս օրերի արձագանք է նաեւ նրա «Հատված» պոեմը: Ազգային համատարած **շվարու** կեղեքիչ պահն է.

Հեյ ո՞ւր եմ հիմա ես–
Ես ո՞ւր եմ–
Ես ո՞ւր եմ հասել.
Եվ ո՞ւր է,
Երկի՛ր իմ,
Քո հուրը–
Փրփուրը-
Լուսե:
Մենք, լուռ, շվարե՞լ ենք,
Լույսերս
Մարել ենք–
Հույսերս էն ու՞մ ենք տվել...
Եվ ո՞վ մեզ,
էլ ո՞վ մեզ, էն ո՞վ պիտի տա–
Երկի՛ր իմ, թռիչք ու թեւեր...(2, 68-70):

1918 թ. ապրիլի 12-ին երեկոյան ժամը 9-ին (նոր տոմարով՝ 25-ին, որ մտցվեց 1918թ. ապրիլի 17-18-ի գիշերը) Կարս մտավ թուրքական 11-րդ դիվիզիան: Նույն թվականի մայիսի 15-ին թուրքերն արդեն Ալեքսանդրապոլում էին:

Չարենցն այս մասին չէր կարող չիմանալ եւ իր վեպը հյուսելիս չէր կարող չմտաբերել այս փաստերը:

Պատմական հայրենիքում նորից հաստատվում է թուրքը՝ իր հետ մեկտեղ գյուղերում ու քաղաքներում վերահաստատելով իր թափառական աշիրաթներին: Թուրքիայի պարտադրանքով ստեղծվում է Անդրկովկասի Դաշնային Հանրապետություն, որ նրա իսկ սադրանքներով 47 օր անց քայքայվում է՝ տեղը զիջելով երեք անկախ պետությունների: Դա Թուրքիայի հերազանքն էր, որպեսզի հիրականացնի իր համաթուրքական քաղաքականությունը՝ սատարելով Ադրբեջանին, բարեկամություն անելով Վրաստանի հետ եւ շարունակելով 1915 թվականի հայաջինջ քաղաքականությունը: 1918-ի փետրվարին «թյուրքերն արդեն բոլշեւիկների հետ կնքել էին հաշտություն» (Ս�վ, ՀՀ, էջ 112), որ վերջնականապես վերածվեց հայակործան դաշինքի:

1918 թ. մայիսի 26-ին տեղի է ունենում Անդրկովկասյան սեյմի «վերջին ողբերգական նիստը» (ՍՎ, ՀՀ, էջ150): Նույն օրն Անդրկովկասի Դաշնային Հանրապետությունը քայքայվում է, եւ հաջորդաբար անկախություն հռչակելու հերթը հասնում է Հայաստանին: Օրը հայտարարել են մայիսի 28-ը, բայց իրական օրը մայիսի 30-ն է: Այդ օրն էլ ընդունվել է «Հայտարարություն», որով, մինչեւ կառավարություն կազմելը, իրավիճակի տնօրինությունն անցնում է Ազգային Խորհուրդին: «Հայտարարություն» հեղինակը Նիկոլ Աղբալյանն էր: Ահա այն.

«Հայտարարություն

Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ, Հայոց Ազգային Խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն եւ միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային Խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական եւ վարչական ղեկը վարելու համար:

Հայոց Ազգ. Խորհուրդ

1918 թ. մայիս 30

Թիֆլիս» (ՍՎ, ՀՀ, էջ 153):

«Այսպիսով Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապես պետք է համարվեր մայիսի 30-ը: Հակառակ դրան համարվում է մայիսի 28-ը, այսինքն այն օրը, երբ Ազգ. Խորհուրդը վճռեց հաշտության պատվիրակություն ուղարկել Բաթում» (ՍՎ, ՀՀ, էջ 54):

Ու ինչ էր այդ հաշտության դաշնագիրը. Հայաստանը հռչակվում է անկախ պետություն, տարածքը մոտ 12000 քկմ, բնակչության թիվը՝ մոտ մեկ միլիոն գաղթական, տնանկ, սոված ժողովուրդ: **«Եվ... մայրաքաղաքից յոթ կիլոմետր հեռու՝ երեւում էին թյուրքական թնդանոթները»** (ՍՎ, ՀՀ, էջ 156):

Անկախ Հայաստանի ծնունդն ընդունվեց ծանր մտահոգությամբ եւ անգամ հեգնանքով՝ ի՞նչ անկախություն, ի՞նչ հանրապետություն: Ինչպես նշում է Վրացյանը՝ չկային ո՛չ ցնծության աղաղակներ, ո՛չ ծափեր: Իսկ Ազգային Խորհուրդը Թիֆլիսից Երեւան տեղափոխվեց ոչ թե անմիջապես, այլ հուլիսի 17-ին՝ շուրջ 50 օր հետո, որովհետեւ վիճակ չկար, չկային կեցության նվազագույն պայմաններ իսկ: Վրացիները կարծես մի կերպ ազատագրվեցին հայերից՝ առանց Թիֆլիսից պաշտոնական ճանապարհման, անգամ գնացքով վերադարձի հարցում խոչընդոտներ հարուցեցին: Այս ընթացքում վրացիները մեկ անգամ չէ, որ դիմել են հակահայ թուրքամետ գործողությունների եւ, ի վերջո, այնքան սրեցին վիճակը, որ հրահրեցին սահմանային ընդհարումներ:

Հայերը մենակ էին, այդ իսկ պատճառով բաց չէին թողնում ռուսների պոչը: Առաջին վարչապետ ընտրվեց Քաջազնունին, ում թեկնածությանը դեմ էր Պապաջանյանի ղեկավարած ժողովրդական կուսակցությունը: Ըստ նրանց **«նախ՝ Դաշնակցությունն իր վարած քաղաքականությամբ, առհասարակ, պատասխանատու էր հայ ժողովրդի գլխին եկած աղետների համար, երկրորդ՝ թյուրքերի հետ ընդհանուր լեզու գտնելու համար անհրաժեշտ էր նոր ուժ հրապարակ հանել»** (ՍՎ, ՀՀ, էջ 178):

Լուրեր էին շրջում՝ թե թուրքերը կարող են մտնել Թիֆլիս: Մի կերպ Թիֆլիսում ապաստանած հայությունը հիմա էլ փախուստի ուղղությունը վերցրեց դեպի Վլադիկավկազ: Ահա պատմական վկայությունը. **«Թյուրքերի հյուսիս շարժվելու հետեւանքով անասելի իրարանցում առաջ եկավ եւ Թիֆլիսում «...»: Անտանելին, սակայն, հայ ժողովրդի «...» բազմահազար գաղթականության վիճակն էր: «...»: Թուրքական յաթաղանից ազատվածները Հյուսիսային Կովկասում ընկան բոլշեւիկյան դժոխքը»** (ՍՎ, ՀՀ, էջ 117-118):

..Գրական մանրամասն անդրադարձը Մահարու «Երիտասարդության սեմին» վիպակում է՝ փախուստ Թիֆլիսից, ճանապարհի դժվարություններ, Վլադիկավկազ, ուսեւորներին համակած բոլշեւիկյան սարսափ, տեղական բարքեր ու միջավայր(ավելի մանրամասն տես Դ. Գասպարյան, «Գուրգեն Մահարի», Երեւան, 2013, էջ 157-164, 307-316):

Արտաքին թուրքին ավելանում է նա եւ ներքին թուրքը, որ հակահայ գործունեություն էր ծավալում հայոց վերահսկողության գոտիներում: Նրանք հատկապես հարձակողական էին գնացքի կայարաններում: Օրինակ՝ Ուլուխանլուում հայերին գնացքից իջեցնում ու սպանում էին: Հայոց ուժերն ստիպված են եղել դիմելու մաքրագործումների ու զսպման: Ահա վկայությունը. **«Երեւանի կառավարության, ի վերջո հաջողվեց բանալ «...» ճանապարհները՝ մաքրել խռովությունների բույն ծառայող մահմեդական վայրերը եւ որոշ կարգ ու կանոն հաստատել»**

Ստեփան Զորյան

(ՍՎ, ՀՀ, էջ 137):Այս իրողություններից մեկի գեղարվեստական արձագանքը Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմում թուրքական Թալիհի ազատագրման տեսարանն է:

«Մի խոսքով պետք էր ոչնչից պետություն ստեղծել» (ՍՎ, ՀՀ, էջ 182):

Հաց չկար. Անգամ կարտոֆիլի ու լոբիի ալյուրով պատրաստված հացը, որի գինը հասել էր 5 ռուբլու, չէր ճարվում: 450000 գաղթականության 40000 Երեւանում էր: Որբեր, անապաստաններ, դիակներ, խոլերա, բծավոր տիֆ: Մահվան գերանդին շրջում էր երկրով մեկ: Բանը հասնում է երկրից կառավարության անդամների փախուստին: **«Սկսվեց ժողովրդական նախարարների փախուստը Երեւանից, ուր կյանքի պայմանները շատ էին ծանր... «...»: Հայաստանն ուներ երեք պարենավորման նախարար եւ ո՛չ մի պարենավորում»** (ՍՎ, ՀՀ, էջ 53):

«....Եյյուբ-Վեդիի կռիվների ժամանակ հայ կոմունիստները Երեւանում բաց թողեցին կառավարության դեմ ուղղված մի թռուցիկ, որով դասալքության էին հրավիրում զինվորներին: Թռուցիկների հեղինակները ձերբակալվեցին եւ արտաքսվեցին Հայաստանից» (ՍՎ, ՀՀ, էջ 301): Այս խառնակիչ գործունեության անդրադարձը եւս առկա է Չարենցի «Երկիր Նաիրի» վեպում՝ Մարուքե Դրաստամատյանի եւ օրիորդ Սաթոյի գործունեության քննադատությամբ:

1919թ. փետրվարի 12-ին Հայաստանի պատվիրակությունը Հաշտության վեհաժողովին ներկայանում է այսպիսի պահանջներով. **«Ճանաչումը հայկական անկախ պետության, որ պիտի բաղկանար 1) Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի եւ Տրապիզոնի 7 վիլայեթներից՝դուրս ձգելով Տիգրիսի հարավակողմը եւ Օրդու-Սեբաստիա գծից դեպի արեւմուտք գտնվող շրջանները. 2) Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Ջեբել-Բերեքեթ եւ Ադանա՝ Ալեքսանդրեթով հանդերձ. 3) Կովկասի հայկական հանրապետությունը՝Երեւանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արեւմտյան մասը, Կարսի նահանգը՝բացառությամբ Արդահանից հյուսիս գտնվող շրջանի»** (ՍՎ, ՀՀ, էջ 341-342):

Խոսքը նախապատրաստվող Սեւրի հաշտության պայմանագրի մասին է: 1919 թ. հունվարի 30-ին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի առաջարկությամբ, Վեհաժողովը որոշեց ազատել Հայաստանը եւ նշանակել հոգատար (մանդատեր)» (ՍՎ, ՀՀ, էջ 343): Առաջարկություն կար նախկին Օսմանյան կայսրությունից ստեղծել երեք նոր պետություն՝ Հայաստան, Թուրքիա եւ Պոլիս:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սեւրի դաշնագիրը:

Հայ գրողների միության նախագահ Հ.Թումանյանը դիմում է ՀՀ կառավարությանը՝ գրողներին օգնություն հատկացնելու հարցով: 1919 թ. հուլիսի 9-ի որոշումով այդ նպատակով կառավարությունը հատկացնում է 100000 ռ., որ բաժանվում է 8 ամենակարիքավոր գրողների:

1921թ. Փետրվարյան ապստամբությունից հետո բոլշեւիկները լուրեր են տարածում ժողովրդի ծանրկացության մասին: Թիֆլիսում գումարված հայ մտավորականների ժողովը որոշում է Երեւան ուղարկել Թումանյանին՝ տեղում իրադրությունը

Հովհաննես Թումանյան

պարզելու հանձնարարությամբ: Օրջոնիկիձեի արտոնությամբ (Վրացյանը երգիծանքով սրան համարում է «Կովկասի կարմիր փոխարքա») Թումանյանը Երեւան է գալիս մարտի 20-ին: Նույն օրը Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Վրացյանը հեռագրում է Օրջոնիկիձեին, ըստ որի՝ Հայաստանում իրականացված հեղաշրջումը **«անպատասխանատու մարդկանց գործ չէ, այլ բառացի կերպով՝ ամբողջ ժողովրդի» եւ որ «Թումանյանին տրվում է լիակատար հնարավորություն՝ ծանոթանալու իրերի իսկական դրության եւ տեղեկացնելու ձեզ»** (ՍՎ, ՀՀ, էջ 540-541): Մարտի 24-ին Թումանյանը հեռագրում է.

«Թիֆլիս, Օրջոնոկիձեին.

Հինգերորդ օրն է ես Երեւանում եմ: Ծանոթանալով գործերի դրության՝ համոզվեցի, որ մեզ մոտ, Թիֆլիսում, կազմված համոզումը Հայաստանի դեպքերի մասին չի համապատասխանում իրականության: Շարժումը սկսվել է գյուղացիության մեջ, զանազան շրջաններում, տարածվել է մինչեւ Երեւան իր իր հետեւից քաշել է մտավորականությանը: Ստեղծվել է հետեւյալ դրությունը. զենքը ձեռքին միմյանց դեմ են դուրս եկել մի կողմից Հայաստանի բանվորն ու աշխատավոր գյուղացիները, մյուս կողմից կոմունիստների զինված խմբերը, եւ հոսում է արյունը առանց որեւէ հիմքի թշնամության եւ փոխադարձ բնաջնջման համար: Ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, թե ամբողջ հեղափոխության ընթացքին կարմիր բանակը ավելի անմիտ կռիվ չի վարել: Այդ պատճառով ջերմորեն խնդրում եմ ձեր հեղինակավոր միջամտությունը, որպեսզի շուտափույթ կերպով վերջ տրվի այս ոչ ոքի համար պետք չեղած արյունահեղության: Անհրաժեշտ եմ համարում ավելացնել, որ հեղաշրջումից հետո ձերբակալված կոմունիստներից եւ ոչ մեկը եւ ոչ մի ռազմագերի այստեղ չէ գնդակահարված: Նման հաղորդագրություն անում եմ եւ ռազմաճակատում գտնվող ընկեր կոմունիստներին: Եթե կպահանջվեն լրացուցիչ տեղեկություններ, խնդրում եմ կանչել ինձ ռադիոյի մոտ:

Հովհաննես Թումանյան»:

(ՍՎ, ՀՀ, էջ 541, նաեւ Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 10, 1999 էջ 375):

Բայց վտանգավոր խժդժությունները շարունակվում էին:

Ալեքսանդրապոլը բոլշեւիկների կենտրոնն էր, ուր մայիսի 1-ին տեղի է ունենում բուռն ցույց: Հեղաշրջում անելու նպատակով հարձակվում են ՀՅԴ ակումբի վրա: **«Դաշնակցականները խուսափում են արյունահեղությունից: Հրապարակը մնաց բոլշեւիկներին: Հակապետական շարժման կենտրոն էր «Վարդան Զորավար» զրահագնացքը: Լուրը Երեւան հասնելու պես զինվորական նախարարը կարգադրեց, որ «Վարդան զորավար»-ի պետ գնդապետ Մուսայելյանը գնացքը առնելով՝ մեկնի Ղամարլուի ճակատը: Մուսայելյանը ո՛չ միայն չկատարեց իր բարձրագույն իշխանավորի հրամանը, այլեւ կարգադրեց, որ Ղամարլուի ճակատից անմիջապես Ալեքսանդրապոլ մեկնի զրահապատ գնացքի մի մասը, որ պահում էր Հայաստանի սահմանները Վեդի-Բասարի թուրքերի դեմ: Հրամանը կրկնվեց եւ սպարապետ զոր. Նազարբեգյանի կողմից, բայց Մուսայելյանը նորից չենթարկվեց: Ընդհակառակը զրահապատ գնացքի վրա բարձրացրեց բոլշեւիկյան դրոշը, որից հետո նույն Մուսայելյանի նախագահությամբ կազմվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե»,** որը հայտարարեց իրեն երկրի գերագույն իշխանություն» (ՍՎ, ՀՀ, էջ 388- 389):

Չարենցի «Զրահապատ «Վարդան Զորավար»» պոեմը պատմական այս իրադրության գեղարվեստական վավերացումն է:

Մայիսյան ապստամբության հովերով մայիսի 9-ին ռազմահեղափոխական կոմիտե» է ստեղծվում նաեւ Կարսում եւ դիմում **«նահանգապետ Ղորղանյանին, բերդապետ Փիրումյանին եւ քաղաքագլուխ Նորհատյանին՝ պահանջելով 24 ժամվա ընթացքում կտրել ամեն կապ Երեւանի հետ, ճանաչել Ալեքսանդրապոլի խորհդային կառավարությունը եւ շարունակել իրենց պաշտոնավարությունը»** (ՍՎ, ՀՀ, էջ 53):

Այս ամենն ազդեցություն է գործում զորքի եւ այլազգիների վրա: Մայիսի 14-ին կառավարության անունից կոչ է ուղղվում ժողովրդին, որի հեղինակը Դավիթ Անանունն է՝ Բախշի Իշխանյանի աշխատակցությամբ.

«Զրահապատ գնացքի մեջ պատսպարված մի խումբ անորակելի ոճրագործներ «...» իրենց խելագար արարքով օգնում են միայն արտաքին թշնամիներին-թե՝ Հայաստանը օղակող թուրք-թաթարական սպառազեն բանդաներին եւ թե՝ Պոլսի քաղաքագետներին» (ՍՎ, ՀՀ, էջ 393):

Այս խառն ու հակասական քաղաքական պայմաններում անկախ երկրի կառուցման նախաձեռնություն են հանդես բերում շատ հայեր՝ ցանկանում են կառուցել երկաթգիծ, կրի ու ցեմենտի գործարան, արդիականացնել գյուղատնտեսությունը: **«Հայաստանի բնակիչներից ոչ պակաս խանդավառ Հայաստանի անկախությամբ ոգեւորվում էին եւ Հայաստանից դուրս գտնվող հայերը, որոնցից շատերը բուռն կերպով ձգտում էին տեղափոխվել Հայաստան:** «...»: Մի ճամփորդ հետեւյալ ձեւով է նկարագրում իր առաջին տպավորությունները Հայաստանի մայրաքաղաքից. **«Երբ մտնում էի Երեւանի ակումբը, տեսա, որ իմ բոլոր ծանոթները Բագուից, Թիֆլիսից, Ռուսաստանից, բոլորը այնտեղ էին: Տեր Աստված, ո՛վ չկար այնտեղ... Կազմվել էր մի հասարակություն, որի անդամները հենց նոր եկած, իրար գլխի թափված՝ ուզում էին ստեղծել նոր մայրաքաղաքի բնակչություն, նոր պետության քաղաքացիություն»»** (ՍՎ, ՀՀ, էջ 438):

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

Ապրիլ 2018թ., քաղաքացիական անհնազանդություն Երեւանում

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջնորդ, Աժ «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանի նախաձեռնած «Իմ քայլը» նախաձեռնությունն ակտիվ անհնազանդության գործողություններ է իրականացնում մայրաքաղաքում:

Լուսանկարներ՝ առանց մեկնաբանության:

ԱՄՆ Պետդեպը արձագանքում է հայաստանյան զարգացումներին՝ կոչ անելով խուսափել բռնություններից

Պետդեպարտամենտի հաղորդագրությունում, որը հրապարակված է Հայաստանում ԱՄՆ դեսպանության ֆեյսբուքյան էջում, մասնավորապես ասված է. **«Մենք նկատել ենք, որ Երեւանում եւ Հայաստանի այլ քաղաքներում ընթանում են զգալի քանակությամբ բողոքի ցույցեր: Հայաստանի հազարավոր քաղաքացիներ դուրս են եկել փողոցներ՝ իրականացնելու իրենց ազատ կամարտահայտման եւ հավաքներ իրականացնելու իրավունքը: Մենք մոտիկից հետեւում ենք Երեւանի կենտրոնում եւ Հայաստանի այլ քաղաքներում ընթացող բողոքի ցույցերին»:**

«Մեզ ոգեւորում է ցուցարարների մեծ մասի ու ոստիկանության հարգալից եւ պատասխանատու վարքի դրսեւորումն այս վերջին մի քանի օրերի ընթացքում: Մենք անհանգստացած ենք, սակայն, ոստիկանության եւ ցուցարարների միջեւ երբեմն տեղի ունեցող բախումների մասին տեղեկությամբ, որի ընթացքում եղել են տուժածներ: Կոչ ենք անում բոլոր կողմերին զսպվածություն ցուցաբերել եւ խուսափել որեւէ լարվածությունից կամ բռնի գործողություններից», - հայտարարում է Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական գերատեսչությունը:

Ազատվել է Կապանի ոստիկանապետը

Ապրիլի 11-ին ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ-գնդապետ Վլադիմիր Գասպարյանը հրամաններ է ստորագրել:

ՀՀ ոստիկանապետի հրամանով ոստիկանության գնդապետ Արթուր Շմավոնյանն ազատվել է ոստիկանության Կապանի բաժնի պետի պաշտոնից եւ ՀՀ ոստիկանապետի մեկ այլ հրամանով նշանակվել ոստիկանության Սպիտակի բաժնի պետ:

Խմբագրության կողմից

Կապանի ոստիկանապետ Արթուր Շմավոնյանի պաշտոնանկությունը ոգեւորությամբ է ընդունվել Սյունիքում: Նա մարզպետի գրպանային գործիքներից էր եւ որոշակի դեր էր խաղում մարզկենտրոնում կեղծ գործեր հորինելու անբարո արարքներում:

Սպիտակի բնակիչները պետք է նկատի ունենան ամոթալի այդ հանգամանքը եւ զգուշանան ոստիկանի պատվաբեր համազգեստի մեջ ծպտված Արթուր Շմավոնյանից:

Հանրապետության գյուղնախարարի պաշտոնակատարը՝ Սյունիքում

էջ 1

հիմնման ծրագրի քննարկման ընթացքում բարձրացվել են մի շարք հարցեր: **«Հիմնական հարցը, որը քննարկվեց, վերաբերում էր համայնքային անասնաբույժների ինստիտուտի ներդրմանը, կան կազմակերպչական խնդիրներ, ներկայացվեց առաջարկություն, որին ընդհանուր առմամբ դեմ չենք, եւ եթե օրենքը թույլ է տալիս, ապա կարող են ունենալ գլխավոր համայնքային անասնաբույժ, իսկ մնացած ծառայությունները պատվիրակել այլ անասնաբույժների: Քննարկվեց ինտենսիվ այգիների ծրագիրը, քանի որ այստեղ կարկտահարությունից վնասներ չկան, կարկտապաշտպան ցանց ներդնելու կարիք չկա, առաջարկություն եղավ ինտենսիվ այգիների ներդրման ծրագրից օգտվել առանց ցանցերի ներդրման: Կուսումնասիրենք, կտեսնենք՝ էլ ինչ խնդիրներ կան ծրագրերի հետ կապված եւ կհամապատասխանեցնենք շուկայի պահանջարկին»,** - ամփոփելով խորհրդակցության արդյունքները՝ նշել է Իգնատի Առաքելյանը:

Այնուհետև Իգնատի Առաքելյանն ուղեւորվել է «Փափուկ» շինշիլաբուծական տոհմային տնտեսություն: 2015 թվականից գործող տոհմային տնտեսությունում ի սկզբանե ունեցել է 40-50 կենդանի, գլխաքանակն աստիճանաբար ավելացրել են, ապրիլի վերջին նախատեսվում է ներմուծել մոտ 2000 գլուխ կենդանի:

Շինշիլաները ներմուծվում են Դանիայից եւ Լեհաստանից, արագ հարմարվում են Հայաստանի կլիմային, շատ հեշտ են պահվում եւ մեծ խնամք չեն պահանջում: Տնօրեն Մհեր Միրզոյանի խոսքով՝ մորթին այժմ մշակման փուլում է, վերջնական արտադրանքը մոտ 2-3 ամիս անց կհայտնվի շուկայում: **«Սպառման համար պայմանավորվածություններ ունենք հիմնականում Կանադայի, Լեհաստանի եւ Դանիայի հետ, որոնց պահանջարկը մեծ քանակներով է»,** - նշել է Մհեր Միրզոյանը՝ հավելելով, որ արտադրանքի իրացման պայմանավորվածություններ կան նաեւ տեղական շուկայում:

Այցի երկրորդ օրը նախարարի պաշտոնակատարն այցելել է «Լամաքս գրուպ» ՍՊԸ-ին պատկանող մի շարք ընկերություններ, տեղում ծանոթացել գործարանների արտադրանքին, ներկա հզորություններին ու առաջիկա ծրագրերին:

«Լամաքս Գրուպ» ՍՊԸ-ի կազմում են «Մարիլա» եւ «Վամաքս» ընկերությունները, ունեն նաեւ մանր եղջերավոր կենդանիների սպանդանոց եւ տոհմային խոզաբուծական ֆերմա, արտադրանքն իրացնում են «Սյունիքի բարիքներ» խանութների ցանցում եւ խոշոր սուպերմարկետներում: Տնօրեն Ալյոշա Մկրտչյանն ընդգծում է, որ կաթնամթերքն արտադրում են բացառապես անարատ կաթից, արտադրական պրոցեսում չոր կաթ առհասարակ չի կիրառվում: Ընկերության կաթնամթերքի պահպանման ժամկետները շատ կարճ են, իրացումը կազմակերպում են Սյունիքի մարզում ու Երեւան քաղաքում, իսկ վերջին մեկ ամսում այն նաեւ Արցախի սպառողներին է հասնում: Սպառման խնդիրներ չունեն. կաթնամթերքի պահանջարկը հաճախ չեն կարողանում ամբողջությամբ բավարարել, ուստի փորձում են ավելացնել արտադրական ծավալները՝ կաթնատվության բարձրացման եւ այլ միջոցառումների հաշվին: Ընկերությունն աշխատում է փակ շղթայով. վերամշակված արտադրանքի ստացման համար օգտագործում են բացառապես սեփական արտադրության կաթը եւ միսը, այստեղ ապահովում են ապրանքների հետագծելիությունը, խստիվ պահպանվում են անվտանգության եւ սանիտարահիգիենիկ նորմերը: «Վամաքս» ընկերությունն ունի շուրջ 800 խոշոր եղջերավոր սիմենթալ ցեղատեսակի կենդանիներ: Տնօրենը նշում է, որ իրենց արտադրանքի ինքնարժեքը բարձր է, քանի որ բարձրորակ հումք են օգտագործում: Այս համատեքստում նա կարեւորել է մակնշման պահանջի պահպանումը, ինչի շնորհիվ իրենց արտադրանքն ավելի մրցունակ կդառնա:

Այցի ընթացքում նախարարի պաշտոնակատարը եղել է նաեւ «Ագրոբիոպրոդուկտ» ՍՊԸ-ում, որը զբաղվում է հիմնականում թռչնամսի, թռչնակերի արտադրությամբ, իսկ մեկ ամիս առաջ սկսել են նաեւ անասնակերի արտադրությունը: Ընկերության հիմնադիր Արմեն Հարությունյանը նշել է, որ ճտերը ներմուծվում են հիմնականում Իրանի Իսլամական Հանրապետությունից եւ Վրաստանից, այս պահի դրությամբ ճտերի քանակը կազմում է մոտ 20 հազար, թռչնամիսը սպառվում է հիմնականում Սյունիքում, սակայն հետագայում նախատեսում են ընդլայնել իրացման շուկան:

Իգնատի Առաքելյանը տեղեկացրել է, որ նախարարությունը նախատեսում է սկսել լիզինգի նոր ծրագիր, որի շրջանակում հնարավոր կլինի անասնապահական եւ կաթի վերամշակման նոր սարքավորումներ ձեռք բերել՝ համոզմունք հայտնելով, որ ծրագրից օգտվելով՝ փոքր ֆերմերները, որոնք ցանկանում են անասնապահությամբ զբաղվել, կկարողանան ստանալ բարձրորակ կաթ, որը մեծ պահանջարկ ունի, եւ «Մարիլա» ընկերությունը, որը այսօր աշխատում է փակ ցիկլով, ֆերմերներից նույնպես մթերումներ կիրականացնի:

«Մենք շատ ուրախ ենք, որ այսօր ներդրումներ են իրականացվում թռչնաբուծության մեջ, որովհետև այսօր դա երեւի թե ամենամատչելի մսի տեսակն է սպառողի համար, եւ համոզված ենք, որ ոլորտը զարգանում է եւ վստահաբար նոր ներդրումներ են ակնկալվում»,- ընդգծել է Իգնատի Առաքելյանը՝ անդրադառնալով տեղական թռչնաբուծության զարգացման հնարավորություններին:

Նա նաեւ հավելել է, որ Սյունիքի մարզի սերմնաբույծներին տրամադրվել է ցորենի սերմացու եւ ակնկալվում են լավ արդյունքներ:

Այցի շրջանակում Իգնատի Առաքելյանը մասնակցել է նաեւ Կապանում կազմակերպված ծառատունկին:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին
17 ապրիլի 2018թ.

Տեսաֆիլմ՝ ՀՀ ԶՈՒ բանակային 1-ին կորպուսի նորանշանակ հրամանատար Արարատ Մելքումյանի մասին

Հայ հանրությանն է ներկայացվել Ցվետանա Պասկալեւայի հեղինակած «Նվիրյալները» հեռուստահաղորդաշարի հերթական թողարկումը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բանակային 1-ին կորպուսի հրամանատար, գնդապետ Արարատ Մելքումյանի մասին:

Տեսաֆիլը՝ syuniacyerkir.am կայքի «Տեսանյութեր» բաժնում:

«Արդշինբանկի» արդիականացված մասնաճյուղեր Սյունիքում

Ապրիլի 16-ին տեղի ունեցավ «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Կապան» մասնաճյուղի վերաբացման արարողությունը, որին մասնակցում էին «Արդշինբանկի» մանրածախ բիզնեսի տնօրեն Արտակ Խաչատրյանը, ընկերության այլ կառույցների ղեկավարներ: Արդիաոճ կահավորումից զատ մասնաճյուղում ներդրվել է հերթերի կառավարման էլեկտրոնային համակարգ, որ հնարավորություն է ընձեռելու բարելավել սպասարկման որակը: Մասնաճյուղի տնօրեն Տիգրան Հակոբյանը, ով կառույցի ղեկավարումը ստանձնել է ապրիլի 5-ից, «Սյունյաց երկրին» փոխանցեց, որ կոլեկտիվն ամեն հնարավորն անելու է, որ արդարացնի հաճախորդների սպասելիքները: Այսօրվա դրությամբ մասնաճյուղում աշխատում է 13 աշխատակից: Գ.Հակոբյանը նաեւ հավելեց, որ «Արդշինբանկի» ռազմավարությունն այն է, որ մոտակա ժամանակաշրջանում վերազինվեն եւ արդիականացվեն բոլոր մասնաճյուղերը: Նույն օրն արդիականացված մասնաճյուղի վերաբացում տեղի ունեցավ Քաջարանում, ապրիլի 17-ին՝ Մեղրիում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց երկիրն ավելի է հզորանում մարդու եւ մասնագետի այդ տեսակով

Քույր՝ տիեզերական մեծության էակ: Քույր՝ քնքուշ մի հոգի, որի ներկայությունը մեր կյանքում հավերժության խորհրդանիշ է: Եվ երբ վտանգվում է քրոջ կյանքը, մեզ թվում է, թե շուրջ բոլորը խավար է եւ մութ: Քրոջս հասած չարաբաստիկ հիվանդության պատճառով նա հայտնվել էր կոմայի մեջ եւ մահվան դեմ կռիվ էր տալիս: Եվ մենք որոշեցինք նրան տեղափոխել Երեւան՝ «Էրեբունի» բժշկական կենտրոն:

Երբ ծայրահեղ ծանր վիճակում հասանք բժշկական կենտրոն, նրան անմիջապես տեղավորեցին սրտաբանության բաժանմունքում, որի ղեկավարն է Համլետ Հայրապետյանը:

Հիվանդանոցում անհանգստությունից հատակը ոտքերիս տակից փախչում էր: Դժվարությամբ էի ընկալում բուժանձնակազմի կողմից կատարվող գործողությունները:

Բայց ընդամենը ժամեր անց ես տեսա դրական դինամիկա եւ հասկացա, որ կյանքը փրկելու շանսը մեծանում է, իսկ կյանքի կոչողը մեծահամբավ Համլետ Գրիգորիչն է՝ բժշկուհի Զարինե Ղարիբյանի հետ: Նրանց հետ միասին աշխատում էին գրագետ, բանիմաց բուժքույրեր եւ հոգատար մայրապետեր:

Երախտագիտությունս եւ խորին շնորհակալությունս եմ հայտնում Ձեզ՝ Համլետ Գրիգորիչ՝ քրոջս կյանքը փրկելու համար:

Լինելով Սյունեցի, մեծ հպարտություն եմ ապրում, քանզի Սյունյաց երկիրն էլ ավելի է հզորանում մարդու եւ մասնագետի Ձեր տեսակով:

Խոնարհումս Ձեզ եւ Ձեր ծնողներին՝ նման հայորդի մեր ազգին պարգեւելու համար…

«ՀԱՅՈՐԴԻՔ» ՀԿ

Վառ երեւակայությունից եւ խենթությունից ծնված ստեղծագործություններ

էջ 1

Կյանքի վերջում «Վրացֆիլմում» նկարահանեց եւս երկու կինոնկար՝ «Լեգենդ Սուրամի ամրոցի մասին» եւ «Աշուղ Ղարիբ»: 1989-ին «Հայֆիլմ» կինոստուդիայում ռեժիսորը սկսեց աշխատանքները «Խոստովանանք» ինքնակենսագրական ֆիլմի վրա: Նոր-նոր սկսած նկարահանումներն ընդհատվեցին

Ս. Փարաջանովը առաջին արտասահմանյան ուղեւորությունից հետո (Հոլանդիա), հունվար, 1988թ.
Լուսանկարը՝ Զավեն Սարգսյանի

Փարաջանովի առողջական վիճակի վատթարացման պատճառով: Փարաջանովը վախճանվեց 1990-ին եւ թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

«Փարաջանովի հեռանալով կինոյի աշխարհը կորցրեց իր կախարդներից մեկին», - այսպես արտահայտվեցին համաշխարհային կինոյի խոշորագույն գործիչները:

1991-ին Երեւանում բացվեց հանճարեղ ռեժիսորի եւ արվեստագետի թանգարանը, որտեղ հավաքված է նրա 1000-ից ավելի արվեստի գործերը:

«Փարաջանովը ճաշակ է, ափսոս, որ ժողովուրդը նրանից զուրկ է: Երբ առիթ եղավ, ձեռնարկեցինք այս գործը՝ մտածելով, որ կապանցիները հնարավորություն չունեն գնալ Երեւան եւ ծանոթանալ Փարաջանովի թանգարանի ցուցադրանքին», - այսպես ներկայացրեց ցուցահանդեսը Կապանում կազմակերպելու նպատակը Զավեն Սարգսյանը, ով մեկ առ մեկ ներկայացրեց լուսանկարներում պատկերված կոլաժների, ֆիլմերի համար արված էսքիզների, գծանկարների, տիկնիկների, այլ գործերի ստեղծման նախապատմությունը՝ անհրաժեշտ մեկնաբանություններ տալով:

Երկու շաբաթ կապանցի արվեստասերը (եւ ոչ միայն) հնարավորություն կստանա շփվելու փարաջանովյան արվեստի հետ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հայրենիքն անպարտելի է, երբ բանակն ու ժողովուրդը միասին են

Գորիսի պետական քոլեջում ապրիլի 5-ին տեղի ունեցավ «Ցավում ենք եւ հպարտանում» խորագիրը կրող միջոցառում՝ նվիրված 2016թ. ապրիլյան պատերազմի հերոսների հիշատակին: Միջոցառումը կազմակերպել էին պատմության դասախոս Հեղինե Առաքելյանը եւ ուսումնակազմակերպական աշխատանքների, հասարակայնության հետ տարվող աշխատանքների եւ լրատվության մասնագետ Քրիստինա Ադամյանը: Ներկա էին Գորիսի զինվորական կոմիսարի պաշտոնակատար, մայոր Արմեն Հարությունյանը, ՆԶՊ գծով զինկոմիսարիատի ավագ տեսուչ Վիգեն Քաթանյանը, ապրիլյան պատերազմում հերոսաբար զոհված Նարեկ Մկրտչյանի հայրն ու եղբայրը՝ Վարդան եւ Կարեն Մկրտչյանները, ինչպես նաեւ ուսանողներ, ծնողներ:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին քառօրյա պատերազմում զոհվածների հիշատակը: Այնուհետեւ ուսանողները հայրենասիրական երաժշտության ներքո մոտեցան հերոսների լուսանկարներին ու

հարգանքի տուրքը մատուցեցին:

Ուսանողները ներկայացրին ապրիլյան պատերազմի տարեգրությունը, հանդես եկան ասմունքով, երգով եւ պարով: «ՀՏ եւ ԱՀԾԱ» մասնագիտության առաջին կուրսի ուսանող Արայիկ Մկրտչյանը պատրաստել էր գրաֆիկական ներկայացում, որտեղ մեկ առ մեկ ներկայացված էր հերոս մարտիկների կյանքը:

Միջոցառման ավարտին Գորիսի պետական քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանն առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց հերոսների ծնողներին՝ նման զավակներ դաստիարակելու եւ հայրենիքի հանդեպ ունեցած մեծ սիրո ու պատասխանատվության համար:

Շնորհակալական խոսք ասաց կրթօջախի ռազմագիտության դասախոս Կամո Բեգլարյանը՝ անդրադառնալով քոլեջի՝ պատերազմի մասնակից ուսանողներին՝ Հարութ Բաբայանին, Վարդան Գրիգորյանին, Ռազմիկ Շեգունցին, Սմբատ Ալեքսանյանին, Վահագն Սահիլյանին, Վահագն Շալունցին:

Ուսանողներին իրենց կատարած սխրագործության համար քոլեջի տնօրենությունը եւ Գորիսի զինվորական կոմիսարիատը խրախուսեցին պատվոգրերով, որոնց հանձնումը վերապահվեց Գորիսի զինվորական կոմիսարի պաշտոնակատար, մայոր Արմեն Հարությունյանին:

Այսօրինակ միջոցառումներն անչափ կարեւոր են բանակ-հասարակություն կապի ամրապնդման, երիտասարդ սերնդին արիության դասեր տալու եւ վառ, հերոսական օրինակները ներկայացնելու համար, քանզի այնտեղ, որտեղ բանակն ու ժողովուրդը միասին են, հայրենիքն անպարտելի է:

***

ՀՀ բնապահպանության նախարարությունը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ը 2018թ. ապրիլի 11-ից ծառատունկ կազմակերպեցին Հայաստանի գրեթե բոլոր մարզերում: Համահայկական ծառատունկի շրջանակում Գորիսում նույնպես ծառատունկ իրականացվեց, որը կազմակերպեց Գորիսի անտառատնտեսության տնօրեն Արմեն Իշխանյանը: Ծառատունկին ակտիվ մասնակցություն ունեցան Գորիսի պետական քոլեջի դասախոսները եւ ուսանողները: Ի դեպ, երկրորդ անգամ է, ինչ քոլեջը համագործակցում է Գորիսի անտառատնտեսության հետ եւ բարեգործական սկզբունքով աջակցում ծառատունկին:

Նման նախաձեռնությունները նպատակ ունեն նպաստել շրջակա միջավայրի բարելավմանը, ինչպես նաեւ ավելացնել կանաչ տարածքներն ու գեղեցկացնել մեր հայրենի երկրամասը:

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«Գանձասար-Կապանը» ֆուտբոլի Հայաստանի գավաթի եզրափակչում

Ֆուտբոլի Հայաստանի գավաթի կիսաեզրափակիչ խաղում «Գանձասար-Կապանը» ապրիլի 18-ին պատասխան հանդիպումում հաղթել է Գյումրիի «Շիրակին» (առաջին հանդիպումն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1:1 հաշվով) եւ դուրս եկել եզրափակիչ: Մեկ օր առաջ եզրափակչի ուղեգիր էր ձեռք բերել նաեւ Երեւանի «Ալաշկերտը»՝ հաղթահարելով Երեւանի «Բանանցի» արգելքը: Գավաթի խաղարկության եզրափակիչը նախատեսված է մայիսի 16-ին «Հանրապետական» մարզադաշտում:

Ինչ վերաբերում է ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությանը, ապա «Գանձասար-Կապանը» մրցաշարային աղյուսակում զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը, առաջատարից՝ Գյումրիի «Շիրակից» հետ մնալով երեք միավորով: Հետաքրքիր է, որ առաջին չորս թիմերն առաջնության վերջնամասում դասավորվել են մեկ միավորի տարբերությամբ, ինչը նշանակում է, որ առաջնության վերջնագծում թիմերի մասնակցությամբ յուրաքանչյուր հանդիպում եզրափակչի պես է լինելու: Առաջիկա հանդիպումը «Գանձասար-Կապանը» անցկացնելու է ապրիլի 22-ին Երեւանի «Բանանցի» հետ, ինչը սկզբունքային հանդիպում է լինելու երկու կողմերի համար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Քոնթուր Գլոբալ Հիդրոկասկադ» ԲԲԸ ՀԷԿ-երի վերազինման ծրագրի «Շրջակա միջավայրի վրա եւ սոցիալական ազդեցության գնահատում» հաշվետվության վերաբերյալ հանրային լսումներ

Սիրով հրավիրում ենք բոլոր հետաքրքրված կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպություններին ու համայնքի ներկայացուցիչներին՝ սույն թվականի ապրիլի 26-ին, ժամը 15:00-ին մասնակցելու Սիսիանի համայնքապետարանի նիստերի դահլիճում եւ ապրիլի 27-ին, ժամը 11:00-ին Գորիս քաղաքի Գուսան Աշոտի անվան մշակույթի տան դահլիճում (III հարկ) կայանալիք ՔԳՀԿ ԲԲԸ ՀԷԿ-երի վերազինման ծրագրի ՇՄԱԱԳ վերաբերյալ հանրային լսումներին:

«Քոնթուր Գլոբալ Հիդրոկասկադ» ԲԲԸ
Գ. Տաթեւացու 2
3201, Գորիս, Սյունիքի մարզ, Հայաստան

Շնորհակալություն

Խորին շնորհակալություն ենք հայտնում երթուղային ավտոբուսի վարորդ Կամո Մաշուրյանին՝ իր գործին նվիրվածության եւ ջերմ վերաբերմունքի համար:

Գորիս քաղաքի Մամիկոնյան փողոցի բնակիչներ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1230, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 20.04.2018թ.: